# ՀԱՆԳԻՍՏ

## Տ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆԻ
## (1878—1968)

1968 թվականի հունվարի 20-ին Բաքվում վախճանվեց Մայր Աթոռի ավագագույն միաբան տ. Վարդան եպս. Տեր-Սահակյանը:

Տ. Վարդան եպիսկոպոսը ծնվել է 1878 թվականին Լեռնային Ղարաբաղի Ջրաբերդի շրջանի Գյուլլաթաղ գյուղում՝ քահանայի ընտանիքում:

Նախնական կրթությունը ստացել է Ջրաբերդի շրջանի Կուսապատ գյուղի հնգամյա դպրոցում: 1896—1901 թվականներին սովորել է Շուշիի թեմական դպրոցում: Նույն թվականին նշանակվել է ուսուցիչ Ջրաբերդի շրջանի դպրոցում, ուր պաշտոնավարել է մինչև 1904 թվականը:

1904 թվականին ձեռնադրվելով քահանա հարենի գյուղի վրա, նույն տարին հրավիրվում է Հյուսիսային Կովկասի Գրոզնի քաղաքը, ուր պաշտոնավարում է ուղիղ 25 տարի՝ որպես քահանա և ուսուցիչ:

1929 թվականին տեղափոխվելով Բաքու, միաժամանակ զբաղվում է ուսուցչությամբ: 1945 թվականին նշանակվում է Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ավագերեց: 1951 թվականին, Տ. Գևորգ Զ կաթողիկոսի հանձնարարությամբ, մտնում է ս. Էջմիածնի միաբանների շարքը և 1952 թվականին վեղար է ստանում: 1952—1954 թվականներին վարում է վրահայոց թեմի առաջնորդական պաշտոնը: 1954 թվականին նշանակվում է Նոր Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմական առաջնորդ:

1955 թվականին Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսից եպիսկոպոսական ձեռնադրություն է ընդունում և ընտրվում է անդամ Գերագույն հոգևոր խորհրդի:

1962 թվականից կոչվելով հանգուստ. տ. Վարդան եպիսկոպոսը իր վերջին տարիները անց էր կացնում երբեմն ս. Էջմիածնում, երբեմն Բաքվում՝ իր հարազատների մոտ:

Հանգուցյալի վերջին օծումը կատարելու համար հունվարի 21-ին Բաքու մեկնեց տ.

Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ ընկերակցությամբ արժ. տ. Կոմիտաս ավագ քահանա Շիրինյանի:

Վերջին օծման և թաղման արարողությունները կատարվեցին հունվար 23-ին՝ Բաքվի ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում:

Տ. Հուսիկ եպիսկոպոսը իր դամբանականում խոսեց հանգուցյալի կյանքի և գործունեության մասին:

Հանգիստ իր ոսկորներին: